ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՆԱՔԱՐԱ ԽԱՉԻԿԻ

ԽՈՐԵՆ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1901-1938 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Թունյան Վալերի Գեորգիի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վիրաբյան Ամատունի Սասունիկի

պատմական գիտությունների թեկնածու
Ավագյան Գոհար Գեորգիի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունվարի 30-ին, ժամը 13^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. դեկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հակոբ Ղարիբի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո հնարավորություն ստեղծվեց ձերբազատվելու կուսակցական կաղապարված մտածողությունից և անցյալի իրողությունները քննելու կոմունիստական գաղափարախոսության պարտադրանքից ազատ պայմաններում, կարևորվեց Հայ առաքելական եկեղեցու առանձնահատուկ դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում[1]: Ուստի, հայագիտության մեջ Հայ առաքելական եկեղեցու, նրա առաջնորդների հոգևոր և հասարակական գործունեության պատմության ուսումնասիրությունն ու գնահատումը դարձավ արդիական: Այս տեսակետից բացառություն չէ Խորեն Մուրադբեկյանի՝ որպես հոգևորականի, հասարակական-քաղաքական և հոգևոր գործունեության գնահատումն ու արժևորումը:

Հայ իրականության մեջ Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի դերը և նրա մահվան հետ կապված շատ կարևոր իրողություններ դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված և հետազոտված չեն: Կարիք կա նորովի համապարփակ ուսումնասիրության ենթարկելու և գնահատելու նրա հոգևոր-հասարակական գործունեությունը, քանի որ նման ուսումնասիրությունը կարող է լույս սփռել ոչ միայն Խորեն Մուրադբեկյանի կյանքի, այլև անցյալի բարդ ու ներհակ մի շարք երևույթների՝ եկեղեցի-պետություն, Սփյուռք-եկեղեցի-հայրենիք փոխհարաբերությունների վրա, տալ հնարավորինս օբյեկտիվ և իրատեսական գնահատականներ: Խորեն Մուրադբեկյանի գործունեության տարիները հագեցած էին ներազգային ու միջազգային բարդ ու հակասական իրադարձություններով, ուստի նրանց քննությունը և վերլուծությունը մեծապես կնպաստի անցյալի որոշ իրադարձությունների պատճառահետևանքային կապերի ըմբռնման ու գնահատման միջոցով Հայ առաքելական եկեղեցու տեղի, դերի և նշանակության նորովի արժևորմանը, առկա քաղաքական, հանրային, կրոնական մարտահրավերներին դիմակայելու ուղիների մատնանշմանը:

Ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության առարկան Խորեն Մուրադբեկյանի՝ շուրջ 40 տարիների (1901-1938 թթ.) ընթացքում ծավալած հոգևոր և հասարակական գործունեությունն է, որի հանգամանալից քննության նպատակն է՝

1. ներկայացնել Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեության ամբողջական պատկերը,
2. գնահատել նրա մասնակցությունը հայ ժողովրդի ճակատագրին առնչվող հասարակական-քաղաքական գործընթացներին:

[1]Տե՛ս 2005 թ. փոփոխված ՀՀ Սահմանադրության հոդված 8.1 և 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Սահմանադրության հոդված 18 https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510 մուտք՝ 21.12.2023 թ.:

Ելնելով նպատակից՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել Խորեն Մուրադբեկյանի գործունեության վաղ շրջանը, նրա՝ որպես անհատի, հոգևորականի ձևավորման ընթացքը, եկեղեցիների բարեկարգմանն ու դպրոցաշինությանն ուղղված գործունեությունը,
2. ներկայացնել և վերլուծել Խորեն Մուրադբեկյանի՝ Երևանի թեմի առաջնորդական փոխանորդության վաղ շրջանը (1909-1913 թթ.), թեմի հոգևոր-հասարակական խնդիրների լուծմանն ուղղված նրա քայլերը,
3. ուսումնասիրել և արժևորել Խորեն Մուրադբեկյանի ծավալած հայրենանվեր, ազգապահպան գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին,
4. գնահատել Խորեն Մուրադբեկյանի գործունեությունը Երևանի հայոց ազգային խորհրդի կազմում,
5. վերլուծել և գնահատել Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցչի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին իշխանությունների հետ հարաբերություններում,
6. ներկայացնել և վերլուծել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իշխանությունների կողմից եկեղեցու նկատմամբ կիրառվող քայքայիչ գործունեությունն ու դրա դրսևորման ձևերը և այդ ամենի համատեքստում՝ Խորեն Մուրադբեկյանի՝ որպես կաթողիկոսի լիազոր ներկայացուցչի գործունեությունն իշխանությունների հետ հարաբերություններում՝ ներկայացնելով նրա ձեռնարկած միջոցները եկեղեցու իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ,
7. կոմունիստական կուսակցության ամբողջատիրության համակարգի պայմաններում հայ ժողովրդի ճակատագրին առնչվող պատմական զարգացումները, Սփյուռք-եկեղեցի փոխհարաբերությունները ներկայացնել ու վերլուծել ժամանակաշրջանի առանձնահատկությունների համատեքստում, այս ամենի դիտակետից վերլուծել և գնահատել Խորեն Մուրադբեկյանի՝ որպես կաթողիկոսի տեղակալի գործունեությունը,
8. քննության առնել խորհրդային տարիներին Հայ առաքելական եկեղեցու հարմարվողական քաղաքականության պատճառները և դրսևորումները, ցույց տալ, թե որքանով էր եկեղեցին հավատարիմ խորհրդային օրենսդրությանը, ունե՞ր արդյոք հանրային դերակատարություն, որքանով էր ծառայում կամ օգտակար լինում խորհրդային իշխանություններին, արդյո՞ք Խորեն Մուրադբեկյանի գործունեությունը միտված էր եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորմանը,
9. ներկայացնել և վերլուծել Խորեն Մուրադբեկյանի Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու գործընթացը, այն խոչընդոտող խորհրդային իշխանությունների գործողությունների պատճառները,
10. ստալինյան բռնաճնշումների համապատկերում քննել և վերլուծել Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի եկեղեցապահպան, ազգապահպան գործունեությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում,
11. քննական վերլուծության միջոցով վեր հանել Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մահվան առեղծվածի հետ կապված առկա տվյալները, բացահայտել Խորեն Մուրադբեկյանի մահվան նախօրեին պետության՝ եկեղեցու հանդեպ ունեցած առանձնահատուկ դիրքորոշման իրական դրդապատճառները և այդ ամենի

համատեքստում, հիմնվելով ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի փաստերի վրա, նորովի ներկայացնել Խորեն Մուրադբեկյանի մահվանն առնչվող հանգամանքները։

Թեմայի ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1901-ից մինչև 1938 թվականները։ Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է խնդրո առարկայի համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությամբ՝ Խորեն Մուրադբեկյանի՝ որպես հոգևոր գործչի ձևավորման, կայացման, նրա ծավալած ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության ամբողջական լուսաբանման նպատակով։

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմավերլուծական, պատմահամեմատական, պատմահամակարգային, ռետրոսպեկտիվ (հետահայաց) մեթոդները, որոնց միջոցով ի մի է բերվել Խորեն Մուրադ-բեկյանի գործունեության ողջ ժամանակագրությունը, վերլուծվել և քննվել են եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների դրսևորումների պատճառահետևանքային և հետևանքապատճառային կապերը երեք իշխանությունների կառավարման պայմաններում, և այդ ամենի արդյունքում ներկայացվել է Խորեն Մուրադբեկյանի հոգևոր, հասարակական, քաղաքական գործունեությունը։

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

1. Արխիվային փաստաթղթերի, հրատարակված վավերագրերի, գրականության և մամուլի հրապարակումների մանրազնին ուսումնասիրության շնորհիվ առաջին անգամ մեկ համապարփակ աշխատությամբ ներկայացվում է Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը։
2. Նորահայտ վավերագրերի ուսումնասիրության հիման վրա վերագնահատվել են Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության վաղ շրջանը, Երևանի փոխթեմակալության նախապատերազմյան տարիները, կարևորվել է նրա ոչ միայն եկեղեցաշինական, այլև դպրոցաշինական, սոցիալական խնդիրների լուծմանը միտված գործունեությունը։
3. Նորահայտ վավերագրերի և արխիվային փաստաթղթերի ուսումնասիրմամբ վերագնահատվել է Խորեն Մուրադբեկյանի գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին՝ այն դիտարկելով ոչ միայն հոգևոր-հասարակական, այլև քաղաքական տեսանկյունից։
4. Հետազոտության արդյունքում ցույց է տրվել, որ Խորեն Մուրադբեկյանը խորհրդային իշխանությունների կողմից ընդունելի հոգևորական էր, և նրա միջոցով խորհրդային իշխանություններին նույնիսկ հաջողվել է վերափոխել Հայ առաքելական եկեղեցու կառավարման համակարգը՝ Ամենայն հայոց կաթողիկոսի իշխանությունը սահմանափակելու ճանապարհով։
5. Հիմնավորվել է Հայ առաքելական եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակը խորհրդային համակարգում։
6. Խ. Մուրադբեկյանի մահվան նախօրեին տեղի ունեցած իրադարձությունների քննության, նոր փաստերի ներկայացման միջոցով հիմնավորվել է, թե ինչու խորհրդային իշխանությունները դրդապատճառներ չունեին կաթողիկոսին չեզոքացնելու համար։

Ատենախոսությունն ամբողջությամբ կամ նրա առանձին դրույթներ կարող են օգտակար նյութ հանդիսանալ ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետների կրթական

ծրագրերի համար, մասնավորապես «Հայոց նոր և նորագույն պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն» դասընթացների շրջանակներում, օգտակար լինել թեմային առնչվող հետազոտություն կատարողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են 20-րդ դարի առաջին կեսի հայոց պատմության հարցերով ու հատկապես հայ եկեղեցու և եկեղեցական գործիչների ծավալած գործունեությամբ:

Թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը: Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեության շուրջ 40 տարիները որպես հիմնախնդիր և առանձին ատենախոսության թեմա նախկինում գիտական հետազոտության չեն ենթարկվել: Հիմնախնդրին հատվածաբար՝ ըստ ժամանակաշրջանների, մասնակի անդրադարձ է եղել ինչպես առանձին գիտական հոդվածներում, կենսագրական հրապարակումներում, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու պատմությանը նվիրված աշխատություններում:

Ատենախոսության գիտական հիմնավորվածությունն ապահովելու համար հիմք են ծառայել արխիվային վավերագրերը, հայալեզու և օտարալեզու արժեքավոր գիտական հոդվածները, պատմագիտական աշխատությունները, ուսումնասիրությունները և մամուլի հրապարակումները:

Ատենախոսության համար առաջնահերթ կարևորություն են ներկայացնում արխիվային փաստաթղթերը: Թեմայի հիմնական հարցադրումների ուսումնասիրության և վերլուծության, փաստական նյութի շարադրման համար սկզբնաղբյուր են ծառայել Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) Ներսիսյան դպրոցի[2], Կովկասի Հայոց բարեգործական ընկերության[3], Երևանի հայոց թեմական վարչության[4], Երևանի հայոց հոգևոր թեմական կառավարչությանը կից եղբայրական օգնության կոմիտեի[5], Ամենայն հայոց կաթողիկոսի[6], ՀՀ Կառավարության[7], ՀՍԽՀ ներքին գործերի նախարարության[8], Դադյան Խաչիկ վարդապետի[9], Էջմիածնի Գերազույն հոգևոր խորհրդի[10], Էջմիածնի Եղբայրական օգնության գլխավոր կարգադիր հանձնաժողովի[11], Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ Մատենադարան) Կաթողիկոսական դիվանի[12], Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) Հովհաննես Թումանյանի[13], Հարություն քահանա Ճուղուրյանի[14] և Ռուսաստանի պատմական պետական արխիվի Ներքին գործերի նախարարության (1905-1917 թթ.,)[15]

---

[2]Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ 2, ց. 1, գ. 1073, գ. 1114, գ. 1203, գ. 1380, գ. 1396:

[3]Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 300:

[4]Նույն տեղում, ֆ. 48, ց. 1, գ. 406, գ. 421, գ. 641, գ. 967:

[5]Նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 18, գ. 28, գ. 56, գ. 94, գ. 123, գ. 144:

[6]Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 202, գ. 375, գ. 378, գ. 907, գ. 1274, գ. 1675, գ. 1764, գ. 1801, գ. 1958, ց. 3, գ. 42, գ. 49, գ. 69, գ. 76, գ. 83, գ. 97, գ. 242, գ. 554, ց. 5, գ. 25, գ. 56, գ. 93:

[7]Նույն տեղում, ֆ. 113, ց. 5, գ. 3, գ. 9:

[8]Նույն տեղում, ֆ. 116, ց. 3, գ. 4:

[9]Նույն տեղում, ֆ. 319, ց. 1, գ. 302, գ. 303, գ. 304, գ. 310, գ. 313, գ. 314:

[10]Նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 104, գ. 153, գ. 159, գ. 161, գ. 661, գ. 662, գ. 2471:

[11]Նույն տեղում, ֆ. 472, ց. 1, գ. 59:

[12]Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, թղթ. 239, վավ. 293, վավ. 315, վավ. 314:

[13]Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Թումանյանի ֆ., ց. 3, N 1404:

[14]Նույն տեղում, Հարություն քհն. Ճուղուրյանի ֆ., N 96:

[15]Российский государственный исторический архив (РГИА), Министерство внутренних дел, ф. 1276. оп. 19. д. 70. https://shorturl.at/ezQT0 մուտք՝ 05.07.2020թ.:

ֆոնդերի վավերագրերը, զեկուցագրերն ու նամակները, որոնց մեծ մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի ամբողջական կենսագրությունն ըստ ժամանակագրության վերականգնելու, ուսումնասիրելու և վերլուծելու, նրա հոգևոր-հասարակական գործունեությունը գնահատելու համար մեծապես կարևորել ենք ինչպես Հայ առաքելական եկեղեցու պատմությանը նվիրված տպագիր սկզբնաղբյուրները, փաստաթղթերը և նյութերը[16], այնպես էլ ՀՍԽՀ դեկրետները, հրամանները[17] և հրապարակված այլ արխիվային վավերագրերի[18] ժողովածուները: Այս առումով կարևորվել են նաև Վ. սրկ. Տերտերյանի՝ Խորեն Մուրադբեկյանի կյանքին և գործունեությանը նվիրված հոդվածը[19] և Գ. Ավագյանի «Նահատակ հայրապետը» աշխատությունը[20]: Վերջինս առանձնանում է հրապարակված նորահայտ վավերագրերով, որոնց միջոցով լուսաբանվում և բացահայտվում են Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության վերաբերյալ մանրամասներ, և

---

[16]Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ա, (1921-1938 թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, 1994: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.,** Երևան, 1996: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի), հոգևոր, գրական, պատմա-բանասիրական գործունեությունը և գնդակահարությունը 1876-1937 թթ., կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, 1997: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայեան Կաթողիկոս Կիլիկիոյ 1891-1940թթ., կազմեց՝ **Բեհբուդյան Ս**., Երևան 1997: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին Հանրապետության տարիներին (1918-1920թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, 1999: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Զ, Գէորգ Զ Չորեքչյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1938-1955 թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.,** Երևան, 1999: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Է, Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.), կազմեց՝ **Բեհբուդեան Ս.**, Երևան, 2000: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ը, Մատթեոս Բ Իզմիրլեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1908-1910 թթ.), կազմեց՝ **Բեհբուդեան Ս.**, Երեւան, 2001: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԻԲ, մաս Բ, Մկրտիչ Ա Խրիմյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (1820-1892-1907 թթ.), կազմեց՝ **Ավագյան Գ.**, Ս. Էջմիածին, 2020: Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԳ, Գէորգ Ե Սուրէնեանց Կաթողիկոս Ամենայն Հայոց (1847-1930թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.**, Երևան, 2005: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1914-1920): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, հատ. Ա (1914-1917), կազմեց՝ **Ավագյան Գ.,** Ս. Էջմիածին, 2018: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին աշխարհամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1914-1920): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, հատ. Բ (1917-1920), կազմեց՝ **Ավագյան Գ.,** Ս. Էջմիածին, 2018: Սուրբ Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը, «Արարատ»-ի ժառանգությունը, Ս. Էջմիածին, 2010: **Вирабян А.,** Документы о выборах католикоса армянской церкви (1930-1932 гг.), **Լրաբեր հասարակական գիտությունների,** թիվ 1, Երևան, 1996:

[17]ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1 (1920 թ. նոյեմբերի 29 -1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, 1921:

[18]Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. և պատ. խմբ.՝ **Վիրաբյան Ա.**, Երևան, 2004: Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ **Մուքիասյան Հ.**, խմբ.՝ **Վիրաբյան Ա., Խաչատրյան Կ.**, Հայաստանի ազգային արխիվի հրատ., Երևան, 2009: Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատասխանատու խմբագիր և կազմող **Ղազախեցյան Վ.**, Երևան, 1999, 370 էջ: **Մարուքյան Ա., Դալլաքյան Վ.,** Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2008: Տոհմիկ բարերարը /վավերագրերի ժողովածու/, կազմեց՝ **Հովսեփյանը Է.,** գլխ. խմբագիր՝ **Վիրաբյան Ա.**, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2019:

[19]**Վարուժան սրկ. Տերտերյան**, Անցյալի լուսավոր էջերից, Մուրադբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, **Էջմիածին,** Դ-Ե, Ս. Էջմիածին, 1994:

[20]**Ավագյան Գ.**, Նահատակ հայրապետը, Երևան, 2008:

նրա մահվան վարկածի շուրջ պտտվող շատ հանգամանքներ ստանում են նոր գնահատականներ։

Խորհրդային Միության տարիներին հայ եկեղեցու պատմությանը նվիրված հետազոտություններ քիչ են կատարվել և հիմնականում կրել են տեղեկատվական, փաստագրական բնույթ, ինչպես, օրինակ, Ա. Հատիտյանի՝ հիմնախնդրին վերաբերող հոդվածները[21]։

Ա. Հատիտյանն առաջին հետազոտողն էր, որը փորձ կատարեց ներկայացնելու Խորեն արք. Մուրադբեկյանի՝ կաթողիկոսի տեղապահության և հովվապետության տարիները՝ միաժամանակ չափազանց զգուշությամբ անդրադառնալով եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին և կաթողիկոսի կենսագրությունից միտումնավոր բաց թողնելով որոշ մանրամասներ, որոնք վերաբերում էին ստալինյան բռնաճնշումների տարիներին։

Խորհրդային տարիներին խնդրո առարկայի այս կամ այն հիմնահարցի վերաբերյալ քիչ թե շատ արժանահավատ, երբեմն նույնիսկ խիստ հակախորհրդային շեշտադրությամբ հրապարակումները հիմնականում լույս են տեսել Սփյուռքում՝ հեռու խորհրդային գրաքննությունից։ Սփյուռքում հրապարակված ուսումնասիրություններից առավել հետաքրքրական են Թ. Վեհապետյանի[22], Գ. Լազյանի[23] աշխատությունները, որտեղ հեղինակներն առաջին անգամ ներկայացնում են կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մահվան առեղծվածի հետ կապված իրենց դիտարկումները՝ ի հակադրություն խորհրդային իշխանությունների կողմից ընդունված տեսակետի։ Հիմնախնդրին վերաբերող արժեքավոր աշխատությունների շարքին է դասվում նաև պոլսահայ պատմաբան Ա. Ալպոյաճյանի՝ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ Գուշակյանի գործունեությանը նվիրված ծավալուն մենագրությունը[24], որը կարևոր աղբյուր է 1930-ական թվականների Մայր Աթոռ Ս. Էջմիածին-նվիրապետական աթոռներ փոխհարաբերություններն ուսումնասիրելու և գիտականորեն քննելու տեսանկյունից։

20-րդ դարի 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետության ձեռք բերած անկախությամբ պայմանավորված՝ բազմաթիվ հարցերի շարքում կարևորվեց նաև Հայ առաքելական եկեղեցու դերակատարումը հայ ժողովրդի միավորման, ազգային ինքնության պահպանման գործում, որի արդյունքում եկեղեցու պատմությունը՝ որպես հայ ժողովրդի պատմության անքակտելի մաս, առաջին պլան մղվեց։ Այս տեսանկյունից

---

[21]**Հատիտյան Ա.**, Գերագույն հոգևոր խորհրդի կազմությունն ու գործունեությունը, **Էջմիածին,** ԺԲ, Ս. Էջմիածին, 1967։ **Նույնի՝** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Նվիրապետական աթոռները Տ. Խորեն Ա Կաթողիկոսի որով», **Էջմիածին**, Ե, Ս. Էջմիածին, 1968։ **Նույնի՝** Համառոտ ակնարկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նվիրապետական մյուս աթոռները Գևորգ Ե-ի օրով», **Էջմիածին,** Ա, Ս. Էջմիածին 1968։ **Նույնի՝** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Խորեն Ա Կաթողիկոս Մուրադբեկյան (1932 նոյեմբեր-1938 ապրիլ)», **Էջմիածին**, Բ, Ս. Էջմիածին, 1968։ **Նույնի՝** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Տ. Խորեն Ա կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», **Էջմիածին**, Գ, Ս. Էջմիածին, 1968։ **Նույնի՝** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ·) «Մայր տաճարի նորոգության և Հայ եկեղեցու բարեկարգության հարցերը Տ. Խորեն Ա Կաթողիկոսի օրով», **Էջմիածին**, Դ, Ս. Էջմիածին, 1968։

[22]**Վեհապետյան Թ.**, Իրաւ հոգեւորականը, Պեյրութ, 1987։

[23]**Լազեան Գ.,** Հայաստան եւ հայ դատը։ Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991։

[24]**Ալպոյաճեան Ա.**, Թորգոմ պատրիարք Գուշակեան, Գահիրե, 1940։

սույն հետազոտության համար մեծ կարևորություն են ներկայացնում Վ. Թունյանի[25] աշխատությունները՝ նվիրված Ամենայն հայոց կաթողիկոսներ Խրիմյան Հայրիկի, Մատթեոս Իզմիրլյանի, Գևորգ Սուրենյանցի կյանքին ու գործունեությանը, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու պատմության տարբեր խնդիրներին:

Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հովվապետության տարիների՝ եկեղեցական և ազգային կյանքին վերաբերող անցուդարձերը քննելիս և այս ամենի համատեքստում Խորեն Մուրադբեկյանի հոգևոր և հասարակական գործունեությունը գնահատելիս հատկապես արժեքավոր պատմագիտական աղբյուր են հանդիսացել Է. Կոստանդյանի[26], Հ. Հովհաննիսյանի[27], Ս. Ավոյանի[28] և Հ. Հարությունյանի[29] աշխատությունները:

Առաջին համաշխարհային պատերազմի և Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները, Հայ առաքելական եկեղեցու դերը պետականության կայացման գործում գնահատելիս Խորեն եպս. Մուրադբեկյանի գործունեությունը հայ գաղթականներին օգնելու, կրթական, հոգևոր, հասարակական, քաղաքական գործունեությունը քննելու և ներկայացնելու առումով կարևորվել են Ս. Կերտողի (նույն ինքը՝ Ս. Ստեփանյանց)[30], Ա. Հարությունյանի[31] աշխատությունները:

1920-1930-ական թվականներին կոմունիստական կուսակցության ամբողջատիրության համակարգի պայմաններում հայ ժողովրդի ճակատագրին առնչվող պատմական զարգացումները, Սփյուռք-եկեղեցի փոխհարաբերությունները, ժամանակաշրջանի առանձնահատկությունները վերլուծելու, այս ամենի բովում Խորեն արք. Մուրադբեկյանի գործունեությունը ներկայացնելու և քննելու համար պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում Ա. Մանուկյանի՝ «Քաղաքական բռնաճնշումները 1920-1953-ական թթ.», «Հայ առաքելական եկեղեցու բռնադատված

---

[25]**Тунян В.**, Последний период патриаршества Хримяна 1904-1907 гг., Ер., 2003. **Նույնի՝** Правление католикоса М. Измирляна 1908-1910 гг., Ер., 2004. **Նույնի՝** Армянская церковь: материалы еженедельника “Овив” 1906-1910 гг., Ереван, 2009. **Նույնի՝** Патриаршество Хримяна Айрика /1893-1907 гг./, Св. Эчмиадзин, 2013. **Նույնի՝** Армянская область, Ереван, 2017: **Նույնի՝** Католикос всех армян Епрем I Дзорагехци 1809-1830, Св. Эчмиадзин., 2018. **Նույնի՝** Ованес Туманян и армянский вопрос, Ереван, 2020.

[26]**Կոստանդյան Է.,** Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000:

[27]**Հովհաննիսյան Հ.**, Հայ առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906 թթ. (Կրոնագիտական վերլուծություն), Երևան, 2008:

[28]**Ավոյան Ս.,** Ռուսական կառավարության կրոնական քաղաքականությունը Այսրկովկասի Վրաց Ուղղափառ, Հայ առաքելական եկեղեցիների և մուսուլմանական հոգևոր կազմակերպությունների նկատմամբ 1903-1917 թթ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2020: **Նույնի՝** Եկեղեցական գույքի բռնագրավման դեմ պայքարի ազգապահպան նշանակությունը «Խրիմյան Հայրիկի Հայրապետությունը» աշխատությունում, Ընտանիքի տարուան եւ «Էջմիածին» ամսագրի 75-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթեր, **Էջմիածին**, ԺԲ, Ս. Էջմիածին, 2020:

[29]**Հարությունյան Հ.**, Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ., Երևան, 2008:

[30]**Կերտող Ս.**, Հայ եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Ս. Էջմիածին, 2003: **Նույնի՝** Հայ առաքելական սուրբ եկեղեցու գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, Ս. Էջմիածին, 2018: **Նույնի՝** Հայ հոգևորականության մասնակցությունը 20-րդ դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1999:

[31]**Հարությունյան Ա.,** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հասարակական և դիվանագիտական գործունեությունը (1918-1920 թթ.), Ս. Էջմիածին, 2018: **Նույնի՝** Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Երևան, 2004:

հոգևորականները 1930-1938 թթ. /ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի/»[32] և Ս. Ստեփանյանցի՝ «Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք», «Գիրք տառապելոց, 1920-1950-ական թվականներին բռնությունների զոհ հայ հոգևորականներ»[33] աշխատությունները:

Թեմային վերաբերող առանձին հարցեր լուսաբանվել են պատմաբաններ Ն. Ադոնցի[34], Վ. Ղազախեցյանի[35], Ա. Սիմոնյանի[36], Հ. Ավետիսյանի[37], Հ. Սիմոնյանի[38], Լ. Մակարյանի[39], Վ. Մելիքյանի[40] աշխատություններում և գիտական հոդվածներում:

Ատենախոսությունում կարևորվել են նաև տվյալ ժամանակաշրջանի պետական, հասարակական և քաղաքական գործիչների հուշագրությունները[41], որոնց միջոցով հնարավորություն է ստեղծվել պատկերացնելու ժամանակաշրջանը, դեպքերի զարգացման տրամաբանությունը, պատճառահետևանքային կապերը:

Թեմայի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունից ելնելով՝ ուսումնասիրել ենք նաև արտասահմանում տպագրված օտարալեզու աշխատություններն ու հրապարակումները[42], այդ թվում Ֆելիքս Կորլեյի ուսումնասիրությունը[43], որը խորհրդային տարիների՝ Հայ առաքելական եկեղեցու

---

[32]**Մանուկյան Ա.**, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. /ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի/, Երևան, 1997: **Նույնի՝** Քաղաքական բռնաճնշումները 1920-1953-ական թթ., Երևան, 1999:

[33]**Ստեփանյանց Ս.**, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994: **Նույնի՝** Գիրք տառապելոց, 1920-1950-ական թվականներին բռնությունների զոհ հայ հոգևորականներ, Երևան, 2002:

[34]**Ադոնց Ն.**, Երկեր Զ, Երևան, 2012:

[35]**Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006:

[36]**Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, 2000:

[37]**Ավետիսյան Հ.,** Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

[38]**Սիմոնյան Հ.,** Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, 2003:

[39]**Մակարյան Լ.**, Հայաստանի Օգնության Կոմիտեի գործունեությունը (1921-1937թթ.), Երևան, 2018:

[40]**Մելիքյան Վ.,** Էջմիածնի 1917 թ. եկեղեցական համագումարը, Ս. Էջմիածին, 2018: **Նույնի՝** Էջմիածնի եկեղեցական համագումարը, **Բազմավէպ**, Վենետիկ, Ս. Ղազար, 2003, թիւ 1-4: **Նույնի՝** Երևանը և Երևանի նահանգը Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, **Պատմա-բանասիրական հանդես**, թիվ 3, 2010:

[41]**Ա-Դո** (Հ. Տեր-Մարտիրոսյան), Հայության երկունքը, Երևան, 2019: **Գրիգոր Շինարար:** Հուշեր Գ. Ա. Հարությունյանի (Արութինով)՝ 1937-1953 թթ. Հայաստանի կոմկուսի 1-ին քարտուղարի մասին, կազմող՝ **Միկոյան Ն.**, Երևան, 2016: **Խատիսյան Ալ.,** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968: **Սառիկյան Հ.,** Հիշողություններ 1878-1924, Երևան, 2015: **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

[42]**Казарян А., Римский С., Журавский А.,** Атеизм, Православная энциклопедия, Церковно-научный центр «Православная энциклопедия», Т. III, М., 2001. **Акопян В.**, К истории формирования и деятельности руководящих структур Армянской апостольской церкви на Северном Кавказе, **Гуманитарные, социально-экономические и общественные науки, Исторические науки**, N 1, 2013. **Багдасарян А.,** Армянская апостольская церковь и Советское государство: особенности взаимоотношений, **Вестник Моск. ун-та**, сер. 8, История, 2018, № 1. **Георгян П.**, Епископ Армянской Апостольской Церкви. В борьбе за существование, **Журнал Московской Патриархии**. М., 1994. №4 (ЖМП). **Жиромская В.,** Религиозность народа в 1937 году (По материалам Всесоюзной переписи населения), **Исторический вестник**, №5, 2000. **Мелконян Э.,** Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры**, Религия и политика на Кавказе, Материалы международной конференции**, Ереван, 2004. **Ованесян С.,** Ованес Туманян и массовое переселение из Вана-Васпуракана, **Вестник общественных наук**, 2019, № 3. **Tchilingirian H.,** In Search of Relevance: Church and Religion in Armenia since Independence, Paris, 2007. **Mirzakhanyan R., Grigoryan H**., Armenian Apostolic Church under bolshevik ideological and political pressure between 1920 and 1922, **Wisdom** 2(18), 2021. **Oganessyan E.,** The Armenian Church in the USSR, Religion in Communist Lands, **Volume 7**, Sidney, 1979.

[43]**Corley F.,** The Armenian Church Under the Soviet Regime, Part 1: The Leadership of Kevork, Religion, **State & Society**, Vol. 24, No. 1, 1996.

պատմությանը նվիրված օտարալեզու առաջին հիմնարար աշխատությունների թվին է դասվում:

Ատենախոսության շրջանակներում Հայ եկեղեցու պատմության կարևոր դրվագները ներկայացնելու, Մայր Աթոռ Ս. Էջմիածին-նվիրապետական աթոռներ, եկեղեցի-պետություն, Սփյուռք-եկեղեցի փոխհարաբերությունները, Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության, մահվան առեղծվածի հետ կապված որոշ հանգամանքներ ընկալելու և քննելու համար կարևորվել են ինչպես տվյալ ժամանակահատվածի, այնպես էլ հետագա տարիների մամուլի հրապարակումները:

Ուսումնասիրության մեջ ներառվել են հետևյալ ամսագրերի, պարբերական հրատարակությունների, թերթերի հրապարակումները. «Ազատ եկեղեցի», «Ազատամարտ», «Ազգ», «Ազդակ», «Ազդարար», «Ալիք», «Ախուրեան», «Անաստված», «Արմենիա», «Արարատ», «Արեւ», «Բազմավէպ», «Գավառի ձայն», «Երիտասարդ Հայաստան», «Թուրքիա», «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի կոչնակ», «Հայ մամուլ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայրենիք» /ամսաթերթ/, «Հայրենիք» /օրաթերթ/, «Հայ խօսնակ», «Հանդէս ամսօրեայ», «Հասկ», «Հովիւ», «Հորիզոն», «ՀՕԿ», «Մարտակոչ», «Մշակ», «Յառաջ», «Նոր երկիր», «Նոր լոյս», «Սիոն», «ՎԷՄ»:

Ատենախոսության որոշ հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրության առումով արժեքավոր նշանակություն են ունեցել նաև համացանցում տեղ գտած մի շարք հրապարակումներ[44]:

Վերը նշված աղբյուրների և գրականության համալիր ուսումնասիրությունն ու քննությունը լայն հնարավորություն են ընձեռել համակողմանի լուսաբանելու Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության պատմությունը:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր և նորագույն բաժինների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումներն արտացոլված են ատենախոսի գիտական 10 հոդվածներում:

---

[44]**Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան Հարցերու Ուսումնասիրութեան Կեդրոն** https://shorturl.at/lvFL9 մուտք՝ 20.01.2020 թ.: **Բենիկ Ծ. վարդապետ**, Թալանի վանք, Յերևան 1924/ **Հյուսիսափայլ/** https://shorturl.at/lsMUY մուտք՝ 02.03.2019թ.: **Մարդասերները. Մեծ իշխանուհի Տատյանա Ռոմանովա** https://shorturl.at/pwJQ9 մուտք՝ 29.05.2023 թ.: **Նահիրի էլեկտրոնային բառարանների շտեմարան** http://www.nayiri.com/search?dt=HY_HY&l=hy_LB մուտք՝ 28.06.2023 թ.: **Буфеев К.. Патриарх Сергий**, обновленчество и несостоявшаяся реформация Русской Церкви XX века, Благодатный огонь: журнал- № 6. https://blagogon.ru/articles/102/ մուտք՝ 02.03.2023 թ. **Декреты Советской власти**. т. I. М., Гос.изд-во полит.литературы, 1957. **https://www.prlib.ru/item/709081** մուտք՝ 10.07.2020թ.: **Микаэлян А.,** "Для него католикосат был боевым постом", Новое Время, АРХИВ 26/07/2011 https://t.ly/6UorD մուտք՝ 29.03.2023 թ.: **Микаэлян Г**., Католикос, Восканапат, АРХИВ 25/04/2020 https://voskanapat.info/ru/37276/ մուտք՝ 01.02.2018 թ.: **Начало движения церковных обновленцев**, Журнал ФОМА/ https://rb.gy/xam9dn մուտք՝ 02.03.2023 թ.: **Конституция (основной закон) Союза Советских Социалистических Республик**, Утверждена Чрезвычайным VIII съездом Советов Союза ССР 5 декабря 1936 года (с последующими изменениями и дополнениями). https://rb.gy/9mui66 մուտք՝ 09.03.2023 թ.: **Forbes Kazakhstan** https://rb.gy/h253og մուտք՝ 10.03.2023թ.

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ինը ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, ուսումնասիրության մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը կրում է **«Խորեն Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեության վաղ շրջանը (1901-1913 թթ.)»** վերնագիրը, բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից առաջինում ներկայացված է Խորեն Մուրադբեկյանի հոգևոր գործունեության վաղ շրջանը, նրա՝ որպես անհատի, հոգևորականի ձևավորման ընթացքը, եկեղեցիների բարեկարգմանն ու դպրոցաշինությանն ուղղված գործունեությունը ինչպես նոր Բայազետ գավառում, այնպես էլ Գորիիում, անդրադարձ կատարելով նրա մասնակցությանը 1906 թ. օգոստոսի 15-ին Էջմիածնում գումարված կենտրոնական պատգամավորական ժողովին՝ քննվել են նրա՝ որպես ժամանակի առաջադեմ գործչի քաղաքական հայացքները և դիրքորոշումը, իսկ երկրորդում ներկայացվել և վերլուծվել են Երևանի թեմի առաջնորդական փոխանորդության վաղ շրջանը (1909-1913 թթ.), թեմի հոգևոր-հասարակական խնդիրների լուծմանն ուղղված վերջինիս քայլերը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը ժամանակի մարտահրավերներին ընդառաջ (1914-1920թթ.)»**, կրկին բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում ներկայացվել և վերլուծվել է Խորեն Մուրադբեկյանի ծավալած հայրենանվեր, ազգապահպան գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ այն դիտարկելով ոչ միայն հոգևոր-հասարակական, այլև քաղաքական տեսանկյունից: Գնահատվել է նրա դերը Երևանի հայոց ազգային խորհրդի կազմում: Երկրորդ ենթագլխում վերլուծվել և գնահատվել են Խորեն եպիսկոպոսի՝ որպես Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցչի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, նրա՝ արտասահմանում հայկական երկու պատվիրակությունների հաշտեցմանն ուղղված ջանքերը, Սփյուռքում տիրող կուսակցական պայքարի հողի վրա պառակտված հայ համայնքին համախմբելու քայլերը:

Հետազոտության երրորդ գլուխը՝ **«Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում և Հայ առաքելական եկեղեցին»**, բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում ներկայացվել և վերլուծվել են Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո իշխանությունների կողմից եկեղեցու նկատմամբ կիրառվող քայքայիչ գործունեությունն ու դրա դրսևորման ձևերը և այդ ամենի համատեքստում՝ Խորեն Մուրադբեկյանի՝ որպես կաթողիկոսի լիազոր ներկայացուցչի գործունեությունն իշխանությունների հետ հարաբերություններում: Գնահատվել է նրա գործունեությունը ՀՕԿ-ի, «Կարմիր խաչի ընկերության» աշխատանքներում: Երկրորդ ենթագլխում քննության են առնվել խորհրդային տարիներին Հայ առաքելական եկեղեցու հարմարվողական քաղաքականության պատճառները, այդ ամենի համատեքստում

գնահատվել և արժևորվել է Խորեն Մուրադբեկյանի եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների կարգավորմանը միտված գործունեությունը:

Հետազոտության չորրորդ գլուխը կրում **է «Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյան»** վերնագիրը և ներառում է երեք ենթագլուխներ: Առաջինում ներկայացվել և վերլուծվել է Խորեն Մուրադբեկյանի Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու գործընթացը: Երկրորդ ենթագլխում ստալինյան բռնաճնշումների համապատկերում վերլուծվել և գնահատվել է Խորեն Մուրադբեկյանի՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի ազգանվեր գործունեությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Երրորդ ենթագլխում ներկայացվել են Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մահվան առեղծվածի հետ կապված պատմագիտությանը հայտնի տեսակետները, որոնց քննության և հավաստի փաստերի ու վավերագրերի ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, թե ինչու խորհրդային իշխանության վերնախավն իր առջև նպատակ չէր դրել սպանելու Ամենայն հայոց կաթողիկոսին և լուծարելու Մայր Աթոռը:

Եզրակացություններ: Ամփոփելով Խորեն Մուրադբեկյանի՝ շուրջ քառասուն տարվա հոգևոր-հասարակական գործունեության արդյունքները՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. Խորեն Մուրադբեկյանն, որպես Նոր Բայազետ գավառի եկեղեցիների բարեկարգիչ, իր հոգևոր գործունեության վաղ շրջանում տիրող սոցիալ-տնտեսական, համատարած խավարի և անգրագիտության պայմաններում դարձավ գավառի համար այն լուսավորիչներից մեկը, որը բնակչության փրկության միակ ճանապարհը համարեց կրթությունը՝ դպրոցական կյանքի կազմակերպումն ու զարգացումը: Նրա ջանքերով Նոր Բայազետ գավառում վերաբացվեցին և հիմնվեցին շատ դպրոցներ: Երիտասարդ Խորեն Մուրադբեկյանը Նոր Բայազետի գավառում ծավալեց նաև ակտիվ եկեղեցաշինական գործունեություն, որից անմասն չմնաց նաև Գորիի հայոց եկեղեցու թեմը:

2. Քննելով Խորեն Մուրադբեկյանի՝ դաշնակցական կուսակցությանն անդամ լինելու հարցը և հիմք ընդունելով մի շարք կարևոր փաստաթղթեր՝ փաստում ենք, որ Խորեն Մուրադբեկյանը երբեք չի եղել կուսակցական. նա ժամանակի առաջադեմ լիբերալ գործիչ էր և կողմ էր եկեղեցու բարենորոգմանը՝ ժամանակի պահանջներին համապատասխան:

3. Խորեն վարդապետի գործունեությունը նախապատերազմյան խաղաղ տարիներին՝ Երևանի փոխթեմակալության առաջին շրջանում, առավելապես աչքի ընկավ ոչ միայն հոգևոր, կրթամշակութային, այլև առկա սոցիալական խնդիրների լուծման առումով նրա ակտիվ դիրքորոշմամբ:

4. Առաջին համաշխարհային պատերազմով սկսվեց Խորեն Մուրադբեկյանի՝ Երևանի փոխթեմակալության երկրորդ փուլը: Առաջին աշխարհամարտի տարիներին Խորեն Մուրադբեկյանն իր ուշադրության կենտրոնում էր պահում ոչ միայն տեղի հայ բնակչության անվտանգության, այլև արևմտահայ գաղթականների փրկության, պահպանության խնդիրները, որոնք լուծելու համար նա ակտիվ գործունեություն ծավալեց Էջմիածնի և Երևանի եղբայրական օգնության հանձնաժողովներում:

5. 1917 թ. նոյեմբերի վերջին Խորեն Մուրադբեկյանի գլխավորությամբ կազմվեց Երևանի ազգային խորհուրդը, որը երկիրը ղեկավարում էր մինչև 1918 թ. հուլիսի 19-ը՝

Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության ժամանումը: Այդ ընթացքում նա իրեն դրսևորեց որպես ազգային, քաղաքական գործիչ, համատարած անորոշության պայմաններում կարողացավ Արամ Մանուկյանի հետ միասին համախմբել բոլոր կարող ուժերին և ակտիվ աշխատանքներ տանել հայ գաղթականներին աջակցելու, որբերին խնամելու և Երևանի նահանգին վերաբերող շատ այլ հարցեր լուծելու ուղղությամբ:

6. Հանձին Խորեն եպիսկոպոսի՝ Մայր Աթոռը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին Սփյուռքում ունեցավ իր ներկայացուցիչը, որն իր գործունեության ընթացքում աչքի ընկավ որպես անկողմնակալ և իրատես դիվանագետ:

7. Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորեն արք. Մուրադբեկյանի հիմնական պարտականությունը դարձավ Երևանի փոխթեմակալության հոգևոր և հասարակական գործունեությունից զատ Հայ առաքելական եկեղեցու իրավունքների և սեփականության պաշտպանության հարցով զբաղվելը՝ իշխանությունների համար դառնալով կաթողիկոսի կողմից լիազորված ներկայացուցիչ:

8. 1920-1923 թթ. Խորեն արք. Մուրադբեկյանը՝ որպես Ամենայն հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ, պետական մարմինների հետ հարաբերություններում իր գործունեությամբ ցույց տվեց, որ խորհրդային իշխանության նկատմամբ ցուցաբերում է օրինապահ, չեզոք վերաբերմունք և կողմ է Հայ առաքելական եկեղեցու բարեփոխմանը՝ ստեղծված իրադրության պահանջներին համապատասխան: Հետևաբար նա կողմ էր ոչ միայն որոշակի փոխզիջումների, այլև եկեղեցու հարմարվողականությանը ստեղծված քաղաքական իրադրությանը՝ մասնավորապես 1924 թ. հունվարի 1-ին Գերագույն հոգևոր խորհրդի հիմնադրմամբ կաթողիկոսի իշխանության սահմանափակմանը:

9. Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի մահից հետո՝ շուրջ երկու տարի ձգձգումով, Սփյուռքի ազդեցիկ գործոնով պայմանավորված՝ Մոսկվայի թույլտվությամբ Ս. Էջմիածնում վերջապես գումարվում է Ազգային եկեղեցական ժողով, որի ընթացքում՝ 1932 թ. նոյեմբերի 12-ին ձայների մեծամասնությամբ կաթողիկոս է ընտրվում Խորեն Մուրադբեկյանը:

10. Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը հայոց հովվապետությունը ստանձնեց այնպիսի մի ժամանակահատվածում, երբ Խորհրդային Հայաստանում գագաթնակետին էր հասել իշխանությունների կողմից եկեղեցու նկատմամբ անհանդուրժողականության քաղաքականությունը: Խորեն Ա Մուրադբեկյանը, ի պաշտպանություն Հայ առաքելական եկեղեցու, ձեռնամուխ եղավ նրա համար կարևորագույն խնդիրների լուծմանը: 1934 թ. հուլիսի 20-ի կոնդակով Սփյուռքում վերահաստատելով հայրապետական նվիրակի պաշտոնը՝ նա կարողացավ վերջ դնել Սփյուռքում տիրող միջկուսակցական պառակտիչ պայքարին, ինչպես նաև հիմնել Հայ առաքելական եկեղեցու նոր թեմեր: Նրան հաջողվեց ոչ միայն ջերմ եղբայրական հարաբերություններ հաստատել Մայր Աթոռի և նվիրապետական աթոռների միջև, այլև աշխարհասփյուռ հայությանը և երեք նվիրապետական աթոռներն ամուր շաղկապել Մայր հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ:

11. Խորհրդային Հայաստանում ստալինյան բռնաճնշումների հետևանքով Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իշխանությունների որդեգրած բացահայտ սահմանափակումների ու հետապնդումների պայմաններում Խորեն կաթողիկոսի հովվապետության տարիներին այդպես էլ չհաջողվեց իրականություն

դարձնել Հայ առաքելական եկեղեցու նոր սահմանադրության և բարեկարգության վերջնական ծրագրի հաստատումն ու կենսագործումը։

12. 1930-ական թթ. Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով կարծես թե իշխանություններին հաջողվեց Խորհրդային Միությունում եկեղեցու՝ որպես հանրային ինստիտուտի քայքայման, հոգևորականների թվի կրճատման, Խորհրդային Միությունում նրանց դերի և հեղինակության արժեզրկման և նվաստացման պայմաններում, չվերացնելով եկեղեցին, այն պահել կոմունիստական գաղափարախոսության համար ցանկալի և ընդունելի կարգավիճակում։

13. Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի մահվան հետ կապված՝ պատմագիտության մեջ առկա վարկածների ուսումնասիրության և վերլուծության, ինչպես նաև ուղղակի և անուղղակի փաստերի համադրման արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Խորհրդային իշխանության վերնախավն իր առջև նպատակ չէր դրել Ամենայն հայոց կաթողիկոսին սպանելու և Մայր Աթոռը լուծարելու։ Չէր բացառվում, որ իշխանությունների կողմից կաթողիկոսի չեզոքացման, Մայր Աթոռի փակման դեպքում Հայ առաքելական եկեղեցին ոչ թե կվերանար, այլ պարզապես հոգևոր կենտրոնը կփոխադրվեր արտասահման՝ դառնալով հենակետ Խորհրդային Հայաստանի կառավարության դեմ պայքարելու համար։

14. Ի դեմս Ամենայն հայոց Խորեն Ա կաթողիկոսի՝ Հայ առաքելական եկեղեցին կորցրեց իր արժանավորագույն և հայրենանվեր հոգևորականներից մեկին, որն իր ողջախոհ, արդար, անձնուրաց հոգևոր-հասարակական գործունեությամբ իրավամբ վաստակեց ազգաշեն ու ազգապահպան գործչի բարձր կոչումը։

Ատենախոսության թեմայի շրջանակում հեղինակի գիտական հրապարակումները.

1.Խորեն Մուրադբեկյանը Նոր Բայազետի եկեղեցիների բարեկարգիչ (1901-1909 թթ.), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Մեսրոպ Արք. Աշճեան 159, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 17, Երևան, 2016, էջ 120-128:

2.Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի՝ Երևանի փոխթեմակալության առաջին շրջանը (1909-1914թթ.), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 5 (20), Երևան, 2018, էջ 281-290:

3.Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հասարակական- քաղաքական գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Ե, Ս. Էջմիածին, 2018, էջ 90-105:

4.Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյանի մահվան առեղծվածի վերլուծությունը պատմագիտության մեջ, Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Է, Ս. Էջմիածին, 2018, էջ 136-146:

5.Տեր Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հոգևոր-հասարակական գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, ԵՊՀ, Հայագիտության հարցեր, N 2 (17), Երևան, 2019, էջ 58-69:

6.Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի՝ Երևանի փոխթեմակալության վերջին շրջանը. Խորհրդային իշխանության հաստատման տարիներ (1920-1924 թվականներ), Պատմություն և քաղաքականություն, Գիտական հանդես, N 2 (7), Երևան, 2020, էջ 41-59:

7.Մայր Աթոռ-նվիրապետական աթոռներ փախհարաբերություններն Ամենայն հայոց Խորեն Ա կաթողիկոսի հովվապետության տարիներին, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 15, Երևան, 2023, էջ 227-240:

8. About Archbishop Khoren Muradbekyan's election as Catholicos of all Armenians, Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, N 2 (20), ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2019, էջ 5-16:

9.The efforts of Archbishop Khoren Muradbekyan aimed at the normalization of church-state relations in 1924-1930, Բանբեր հայագիտության, Հայագիտական միջազգային հանդես, N 3 (27), ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2021, էջ 54-67:

10. On the mystery of death of Khoren I Muradbekian - Catholicos of All Armenians, Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Ս. Էջմիածին, Օտարալեզու հավելված, 2023, էջ 85-96:

АЙРАПЕТЯН КАНАКАРА ХАЧИКОВНА

ДУХОВНАЯ И ОБЩЕСТВЕННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ХОРЕНА МУРАДБЕКЯНА (1901-1938 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 30-го января 2024 г. в 13^{00} часов на заседании специализированного совета по История Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Предметом диссертационного исследования является духовная и общественная деятельность Хорена Мурадбекяна на протяжении почти 40 лет (1901-1938гг), тщательное изучение которой имеет целью:

1.представить полную картину духовной и общественной деятельности Хорена Мурадбекяна,

2.дать оценку его участия в общественно-политических процессах, связанных с судьбами армянского народа.

Диссертация состоит из введения, четырёх глав, девяти подглав, заключения, списка использованных источников и литературы, приложения.

Во введении представлены актуальность темы диссертации, предмет исследования, его цель и задачи, хронологические рамки, методология исследования, научная новизна и практическая значимость, степень научной изученности темы и библиографическая основа.

Первая глава диссертации, озаглавленная **«Ранний период духовной и общественной деятельности Хорена Мурадбекяна (1901-1913 гг.)»**, состоит из двух подглав, в первой из которых представлен ранний период духовной деятельности Хорена Мурадбекяна, процесс становления его как личности и священнослужителя, деятельность, направленная на благоустройство церквей и строительство школ как в Новой Баязетской провинции, так и в Гори. Во второй подглаве представлена и проанализирована деятельность Мурадбекяна в ранний период Ереванской епархии (1909-1913гг.), направленная на решение духовных и социальных проблем епархии.

Вторая глава диссертации, **«Епископ Хорен Мурадбекян навстречу вызовам времени (1914-1920 гг.)»,** также состоит из двух подглав. В первой подглаве представлены и подробно проанализированы патриатическая и народническая деятельность Мурадбекяна в годы

Первой мировой войны, рассматривая эту деятельность не только с духовно-социальной, но и с политической точки зрения. В данной подглаве была оценена также роль Мурадбекяна в составе Ереванского армянского национального совета. Во второй подглаве рассматривается и оценивается деятельность Епископа Хорена как представителя Армянской Апостольской церкви в годы Первой Республики Армении, его усилия по примирению двух армянских делегаций за рубежом, а также шаги по объединению разобщенной армянской диаспоры на почве партийной борьбы.

Третья глава исследования, **«Установление Советской власти в Армении и Армянская Апостольская церковь»**, также разделена на две подглавы. В первой подглаве представлены и проанализированы разрушающая деятельность властей и формы её проявления по отношению к церкви после установления советской власти в Армении и в контексте всего этого деятельность Хорена Мурадбекяна как уполномоченного представителя Католикоса в отношениях с властями. Во второй подглаве рассмотрены причины адаптивной политики Армянской Апостольской церкви в советские годы, и в этом контексте была оценена деятельность Мурадбекяна по урегулированию взаимоотношений между церковью и государством.

Четвёртая глава исследования носит название **«Каталикос всех армян Хорен Мурадбекян»** и разделена на три подглавы. В первой был представлен и проанализирован процесс избрания Хорена Мурадбекяна Католикосом всех армян. Во второй подглаве на фоне сталинских репрессий анализируется и оценивается народническая деятельность Мурадбекяна как Католикоса всех армян как на Родине, так и в Диаспоре. В третьей подглаве изложены известные историографические точки зрения, связанные с мистической смертью Католикоса всех армян Хорена Мурадбекяна, в результате рассмотрения и изучения которых, а также на основе достоверных фактов и документов обосновывается, почему элита советской власти не ставила перед собой цели убить Католикоса всех армян и распустить Первопрестольную Армянскую церковь.

В заключении подведены итоги исследования и изложены его основные выводы.

HAYRAPETYAN KANAKARA KHACHIK

SPIRITUAL AND SOCIAL ACTIVITY OF KHOREN MURADBEKIAN (1901-1938)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of «History of Armenia» 07.00.01

The Defense of the Dissertation will be held on January 30, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The subject of the dissertation study is Khoren Muradbekyan's spiritual and social activities over the course of 40 years (1901-1938), a thorough examination of which aims to.

1. present a complete picture of Khoren Muradbekan's spiritual and social activities,
2. evaluate his participation in the social and political processes related to the fate of the Armenian people.

The dissertation consists of an introduction, four chapters, nine subchapters, conclusion, list of used sources and literature, and an appendix.

The introduction presents the relevance of the topic of the dissertation, the subject of the study, the goal and problems, the chronological framework, the methodology of the study, the scientific innovation and practical significance, the degree of scientific study of the topic and the source-scientific basis.

The first chapter of the dissertation, entitled **"The early period of Khoren Muradbekian's spiritual and social activity (1901-1913)",** consists of two sub-chapters, the first of which presents the early period of Khoren Muradbekian's spiritual activity, the process of his formation as an individual and a clergyman, his activities aimed at improving churches and building schools both in the new Bayazet province and in Gori, and the second subchapter presents and analyzes the early period of vicarage of Yerevan Diocese (1909-1913) and the latter's steps aimed at solving the spiritual and social problems of the Diocese.

The second chapter of the dissertation entitled "**Bishop Khoren Muradbekian facing the challenges of the time (1914-1920)**", again consists of two sub-chapters. The first sub-chapter presents and analyzes Khoren Muradbekian's patriotic and nation-preserving activity during the First World War, observing it not only from a spiritual-social, but also from a political point of view. His role in Yerevan's Armenian National Council was evaluated. The second sub-chapter analyzes and evaluates the activities of Bishop Khoren as a representative of the Armenian

Apostolic Church during the years of the first Republic of Armenia, his efforts to reconcile the two Armenian delegations abroad, and the steps taken to unite the Armenian community divided because of the party struggle in the Diaspora.

The third chapter of the study**, "The Establishment of Soviet Power in Armenia and the Armenian Apostolic Church"**, is also divided into two sub-chapters. The first sub-chapter presents and analyzes the corrosive activity applied to the church by the authorities after the establishment of the Soviet power in Armenia and the forms of its manifestation, and in the context of all this, the activity of Khoren Muradbekian as the authorized representative of the Catholicos in dealing with the authorities. The second sub-chapter examines the reasons for the adjustment policy of the Armenian Apostolic Church during the Soviet years, and in the context of all this, Khoren Muradbekian's activity aimed at the regulation of church-state relations was evaluated.

The fourth chapter of the study is entitled **"Catholicos of All Armenians - Khoren A Muradbekian"** and is divided into three subchapters. The first subchapter presents and analyzes the process of election of Khoren Muradbekian as Catholicos of All Armenians. The second sub-chapter analyzes and evaluates Khoren Muradbekian's nation-loving activity as the Catholicos of All Armenians against the backdrop of Stalinist repressions both in the homeland and in the Diaspora. The third sub-chapter presents the viewpoints known to historiography related to the mystery of the death of the Catholicos of All Armenians Khoren Muradbekian and as a result of their examination and the study of reliable facts and documents, it was substantiated why the elite of the Soviet power did not set a goal to kill the Catholicos of All Armenians and dissolve the Mother See.

The main results and presumptions of the research are summarized in the conclusion.